ՊԵՏՈՒԹՅԱՆ ԿՈՂՄԻՑ ՆՊԱՍՏԻ ՁԵՎՈՎ ԱՐՏԱԴՊՐՈՑԱԿԱՆ ԾՐԱԳՐԵՐ ԻՐԱԿԱՆԱՑՆՈՂ ԿԱՄԱՎՈՐ ԱՏԵՍՏԱՎՈՐՎԱԾ ՄԱՆԿԱՎԱՐԺԱԿԱՆ ԱՇԽԱՏՈՂՆԵՐԻՆ ԼՐԱՎՃԱՐՆԵՐԻ ՏՐԱՄԱԴՐՄԱՆ ՄԱՍԻՆ ՊԱՅՄԱՆԱԳԻՐ Ն 2

ք. Հրազդան «23» օգոստոսի 2023 թ.

ՀՀ Կոտայքի մարզպետարանը, ի դեմս Գլխավոր քարտուղար Լ.Պետրոսյանի, որը գործում է մարզպետի աշխատակազմի կանոնադրության հիման վրա (այսուհետ՝ Պատվիրատու), մի կողմից և ՀՀ Կոտայքի մարզի Չարենցավան համայնքապետարանի, ի դեմս համայնքի ղեկավար Հակոբ Շահգալդյանի, որը գործում է կազմակերպության կանոնադրության հիման վրա (այսուհետև՝ Կատարող), մյուս կողմից, (այսուհետև՝ միասին՝ Կողմեր), հիմք ընդունելով ՀՀ կառավարության 2023 թվականի մարտի 2-ի թիվ 269 որոշումը և ՀՀ կրթության, գիտության, մշակույթի և սպորտի նախարարի 2023 թվականի հունիսի 6-ի թիվ 843-Ա/2 հրամանը, կնքեցին սույն պայմանագիրը (այսուհետև՝ Պայմանագիր) հետևյալի մասին.

1. ՊԱՅՄԱՆԱԳՐԻ ԱՌԱՐԿԱՆ

1.1. Պատվիրատուն պարտավորվում է ՀՀ 2023 թվականի պետական բյուջեի 09.05.01. «12002. Կամավոր ատեստավորման նոր համակարգի ներդրում՝ ուղղված արտադպրոցական ուսումնական հաստատությունների մանկավարժական աշխատողների որակի բարձրացմանը» միջոցառման իրականացման նպատակով Պայմանագրի 2.1-ին կետում նշված ֆինանսական միջոցները հատկացնել Կատարողին, իսկ Կատարողը ստանձնում պարտավորություն՝ 2023 թվականի ընթացքում իրականացնել թվով 4 ատեստավորված մանկավարժական աշխատողների լրավճարների տրամադրումը (այսուհետև՝ Աշխատանք)՝ համաձայն պայմանագրի անբաժանելի մաս կազմող Հավելված 1-ի:

2. ՊԱՅՄԱՆԱԳՐԻ ԳԻՆԸ

2.1. Պայմանագրով կատարված Աշխատանքի ընդհանուր գինը կազմում է 2154600 (Երկու միլիոն հարյուր հիսունչորս հազար վեց հարյուր) ՀՀ դրամ:

2.2. Պատվիրատուն, համաձայն Կատարողի կողմից ներկայացված հայտի, կատարում է անկանխիկ վճարում՝ դրամական միջոցները Կատարողի գանձապետական հաշվին փոխանցելու միջոցով:

3. ԿՈՂՄԵՐԻ ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐՆ ՈՒ ՊԱՐՏԱԿԱՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

3.1. Պատվիրատուն իրավունք ունի.

3.1.1. ցանկացած ժամանակ (այդ թվում՝ ՀՀ ֆինանսների նախարարության և պետական այլ մարմինների միջոցով) ստուգել Կատարողի կողմից կատարված Աշխատանքի ընթացքը և որակը՝ առանց միջամտելու վերջինիս գործունեությանը, ինչպես նաև օրենսդրությամբ սահմանված կարգով իրականացնել ներքին աուդիտ,

3.1.2. ՀՀ օրենսդրությամբ և Պայմանագրով սահմանված պահանջներին չհամապատասխանելու դեպքում չընդունել Աշխատանքը՝ իր հայեցողությամբ սահմանելով թերությունների անհատույց վերացման ողջամիտ ժամկետ,

3.1.3. Կատարողից պարբերաբար պահանջել ու ստանալ տեղեկություն Պայմանագրի կատարման ընթացքի մասին,

3.1.4. Կատարողի կողմից Պայմանագրի պահանջները չկատարելու դեպքում դադարեցնել ֆինանսավորումը՝ մինչև թերությունների վերացումը,

3.1.5. Կատարողի կողմից Պայմանագրով նախատեսված ոչ ֆինանսական ցուցանիշների թերկատարման դեպքում համապատասխան չափով նվազեցնել ֆինանսավորումը:

3.2. Կատարողն իրավունք ունի.

3.2.1. Պատվիրատուից պահանջել վերացնել Կատարողի գործողություններից (անգործությունից) անկախ՝ Պատվիրատուի մեղքով Պայմանագրի կատարման համար առաջացած խոչընդոտները կամ վերանայել Պայմանագրի պայմանները,

3.2.2. Վաղաժամկետ լուծել Պայմանագիրը՝ Պայմանագրով կամ Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով և դեպքերում:

3.3. Պատվիրատուն պարտավոր է.

3.3.1. Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ և (կամ) Պայմանագրով նախատեսված դեպքերում իր և Կատարողի կանոնադրություններով սահմանված իրավասությունների շրջանակներում աջակցել Կատարողին, այդ թվում՝ ցուցաբերել մեթոդական և կազմակերպական օգնություն,

3.3.2. իրականացնել Պայմանագրով նախատեսված այլ աշխատանքներ:

3.4. Կատարողը պարտավոր է.

3.4.1. Պայմանագրով նախատեսված ֆինանսական միջոցներն օգտագործել Պայմանագրով սահմանված նպատակներով,

3.4.2. կատարել Պատվիրատուի կողմից բացահայտված թերությունների վերացման նպատակով տրված ցուցումները,

3.4.3. Պատվիրատուին անհապաղ հայտնել Պայմանագրի կատարման համար առաջացած խոչընդոտների մասին և միաժամանակ ձեռնարկել իր կողմից հնարավոր բոլոր միջոցները՝ այդ խոչընդոտներն անհապաղ վերացնելու համար,

3.4.4. Պայմանագրի գործողության ընթացքում ապահովել Աշխատանքին վերաբերող փաստաթղթերին ծանոթանալու Պատվիրատուի հնարավորությունը,

3.4.5. իրականացնել Պայմանագրի շրջանակներում Պատվիրատուի կողմից տրամադրված գումարների հաշվապահական հաշվառման վարում՝ Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով,

3.4.6. Պատվիրատուի պահանջով նրան հաղորդել տեղեկատվություն Աշխատանքի ընթացքի մասին, Կատարողը պատասխանատվություն է կրում հաշվետվությամբ ներկայացված տվյալների հավաստիության համար,

3.4.7. Պատվիրատուին ներկայացնել եռամսյակային ու տարեկան հաշվետվություններ՝ համաձայն ՀՀ ֆինանսների նախարարի 2013 թվականի փետրվարի 4-ի N 104-Ն և 2019 թվականի մարտի 13-ի N 254-Ն հրամանների, ինչպես նաև ՀՀ օրենսդրությամբ և իրավական այլ ակտերով նախատեսված ձևով ու կարգով:

4. ԱՅԼ ԴՐՈՒՅԹՆԵՐ

4.1. Պայմանագիրն ուժի մեջ է մտնում ստորագրման պահից և գործում է մինչև 2023 թվականի դեկտեմբերի 23-ը:

4.2. Պայմանագրում փոփոխություններ և լրացումներ կարող են կատարվել միայն Կողմերի համաձայնությամբ, որը կնքվում է գրավոր:

4.3. Պայմանագիրը կնքված է երկու օրինակից, որոնք ունեն հավասարազոր իրավաբանական ուժ: Յուրաքանչյուր Կողմին տրվում է մեկական օրինակ:

5. ԿՈՂՄԵՐԻ ՀԱՍՑԵՆԵՐԸ, ԲԱՆԿԱՅԻՆ ՎԱՎԵՐԱՊԱՅՄԱՆՆԵՐԸ ԵՎ ՍՏՈՐԱԳՐՈՒԹՅՈՒՆՆԵՐ

ՊԱՏՎԻՐԱՏՈՒ	ԿԱՏԱՐՈՂ
Կոտայքի մարզպետարան ք. Հրազդան, Կենտրոն վարչ. շենք Կոտայքի մարզպետի աշխատակազմ Հ/Հ 900121001896	Չարենցավանի համայնքապետարան Հասցեն՝ ք.Չարենցավան Կենտրոնական Գանձապետարան Հ/Հ 900135101260 ՀՎՀՀ 03022479
ՀՎՀՀ 03014577	
ՀՀ Կոտայքի մարզպետի աշխատակազմի գլխավոր քարտուղար՝	Համայնքի ղեկավար Հ.Շահգալդյան ----------
---------- Է. Պետրոսյան (ստորագրություն) Կ.Տ	(ստորագրություն) Կ.Տ

Հավելված N 1
«23» օգոստոսի 2023 թ.-ին կնքված
թիվ 2 պայմանագրի

Ատեստավորված մանկավարժներին լրավճարի հատկացման ցուցակ

Հ/Հ	Անուն, ազգանուն հայրանուն	Ատեստավորման ուղղություն	Ընդամենը գումար (հազար դրամ)
1	Իսրայելյան Անուշ	Դաշնամուր	47.0
2	Կարինե Մկրտչյան	Դաշնամուր	846.3
3	Վահագն Մարգարյան	Դաշնամուր	188.1
4	Կարինե Ավագյան	սոլֆեջիո	1073.2
	ԸՆԴԱՄԵՆԸ		2154.6

ՊԱՏՎԻՐԱՏՈՒ
Կոտայքի մարզպետարան
ք. Հրազդան, Կենտրոն վարչ. շենք
Կոտայքի մարզպետի աշխատակազմ
Հ/Հ 900121001896

ՀՎՀՀ 03014577

ՀՀ Կոտայքի մարզպետի աշխատակազմի
գլխավոր քարտուղար
Է.Պետրոսյան
(ստորագրություն)
Կ.Տ

ԿԱՏԱՐՈՂ
Չարենցավանի համայնքապետարան
Հասցեն՝ ք.Չարենցավան
Կենտրոնական Գանձապետարան
Հ/Հ 900135101260
ՀՎՀՀ 03022479

Համայնքի ղեկավար
Հ.Շահգալդյան
(ստորագրություն)
Կ.Տ